# ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ
# ՇՄՆ-COP17-25/01-1

ք.Երևան «11» «11» 2025թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սերգո Աթանեսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վազգեն Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. Կողմերը պարտավորվում են հետագայում կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր՝ 2026 թվականին Հայաստանում անցկացվելիք «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP-17) կազմակերպչական աշխատանքների իրականացման մասին:
2. Կողմերն ընդունում և գիտակցում են, որ 2026 թվականին Հայաստանում անցկացվելիք «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (COP-17) հանդիսանում է խոշոր միջազգային միջոցառում, որի պատշաճ, արդյունավետ և անխոչընդոտ անցկացումը բացառիկ և կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար:
3. Մատուցման ենթակա ծառայությունների պայմանագիրը, որը Կողմերը պարտավորվում են կնքել, պետք է բավարարի գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին կամ պայմաններին:
4. Մատուցման ենթակա ծառայությունների պայմանագրի նախագիծը կազմում է Պատվիրատուն:
5. Կատարողը՝

ա) մասնակցում է մատուցման ենթակա ծառայությունների մանրամասն նկարագրի մշակման աշխատանքներին,

բ) Պատվիրատուին է ներկայացնում է գնագոյացման մանրամասն հաշվարկը:

6. Պատվիրատուն պարտավորվում է մատուցման ենթակա ծառայությունների պայմանագրի նախագիծը տրամադրել Կատարողին միջոցառումների մեկնարկի համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:
7. Կատարողը պարտավոր է մատուցման ենթակա ծառայությունների պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ուղեկցող գրությամբ տրամադրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը կամ գրավոր դիրքորոշում անհամաձայնությունների վերաբերյալ:
8. Պատվիրատուն, մատուցման ենթակա ծառայությունների պայմանագրի նախագծի վերաբերյալ Կատարողի գրավոր դիրքորոշման ստացման օրվանից հաշված 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է՝ Կատարողին գրավոր ծանուցել անհամաձայնությունների վերաբերյալ իր դիրքորոշման մասին:
9. Պատվիրատուի կողմից Կատարողի անհամաձայնությունները մերժվելու դեպքում՝ Կողմերը բանակցում են և կազմում տարաձայնությունների վերաբերյալ համաձայնության արձանագրություն:

10. Բոլոր դեպքերում մատուցման ենթակա ծառայությունների պայմանագիրը կնքվում է ոչ ուշ, քան սույն Պայմանագրի 6-րդ կետով նախատեսված մատուցման ենթակա ծառայությունների պայմանագրի նախագիծը Պատվիրատուի կողմից Կատարողին տրամադրելու օրվանից 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
11. Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայությունների պայմանագրի կնքումից հրաժարվելու դեպքում Կատարողը հատուցում է դրանով Պատվիրատուին պատճառված վնասները:
12. Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:
13. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով և ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
14. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, ինչը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:
15. Պայմանագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
16. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Շրջակա միջավայրի նախարարություն** | **«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ** |
| ք.Երևան, Կառավարական տուն 3 | ք.Երևան, Գևորգ Էմինի 8, բն. 35 |
| ՀՎՀՀ – 02507198 | ՀՎՀՀ – 02676654 |
| Էլ.փոստ – minenv@env.am | Էլ.փոստ – info@background.am |
| Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար | «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի տնօրեն |
| ***Սերգո Աթանեսյան*** | ***Վազգեն Պողոսյան*** |
| ------------------------ (ստորագրություն) | ------------------------ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |